

Տեղեկատվական ամփոփագիր

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

Վարկի նպատակը	բնակարանի (բնակելի տան) ձեռքբերում բնակության նպատակով
Վարկի արժույթը	ՀՀ դրամ (AMD)
Վարկի նվազագույն և առավելագույն չափը	5'000'000 – 22'500'000 ՀՀ դրամ՝ երկրորդային շուկայից անշարժ գույքի ձեռքբերման վարկերի դեպքում; ձեռքբերվող անշարժ գույքի մինչև 70%) 5'000'000 - 27'750'000 ՀՀ դրամ՝ առաջնային շուկայից (կառուցապատողից) անշարժ գույքի ձեռքբերման վարկերի դեպքում, ձեռքբերվող անշարժ գույքի մինչև 80%)
Վարկի անվանական տարեկան տոկոսադրույքը	8%, որից 2% -ը սուբսիդավորվում է ՀՀ ֆին. Նախարարության կողմից, ք.Երևանում բնակարանի(բնակելի տան) ձեռքբերման դեպքում 7%, որից 4%-ը սուբսիդավորվում է ՀՀ ֆին. Նախարարության կողմից, ՀՀ մարզերում բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման դեպքում 7.5 % (առաջնային շուկայից՝ կառուցապատողից անշարժ գույքի ձեռքբերման վարկերի դեպքում, որը չի սուբսիդավորվում)
Վարկի փաստացի տարեկան տոկոսադրույքը	8,65-9,45% (սուբսիդավորման դեպքում՝ 6,48-7,25%) ք.Երևանում բնակարանի ձեռքբերման դեպքում 7,57-8,34% (սուբսիդավորման դեպքում՝ 3,31-4,04%) ՀՀ մարզերում բնակարանի ձեռքբերման դեպքում 7,55-8,35% առաջնային շուկայից բնակարանի ձեռքբերման դեպքում
Վարկի անվանական տոկոսադրույքի տեսակը	Հաստատուն տոկոսադրույք, որը կարող է փոփոխվել (բարձրանալ կամ իջնել) միայն <Բնակարան երիտասարդներին ՎՎԿ> ՓԲԸ կողմից վերանայված չափով, 3 տարին մեկ անգամ
Վարկի մարման ժամկետը	120 - 240 ամիս
Վարկի ապահովվածության միջոցներ	- Անշարժ գույք ք.Երևանում, ինչպես նաև Ընկերության կողմից ընդունելի այլ վայրերում - Երաշխավոր (Վարկային կոմիտեի որոշմամբ)
Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն	92,5 %
Ձեռքբերվող անշարժ գույքի առավելագույն արժեքը	- Ձեռքբերման արժեքը՝ ոչ ավելի, քան 25 միլիոն ՀՀ դրամ և միևնույն ժամանակ գնահատված շուկայական արժեքը՝ ոչ ավելի, քան 26 միլիոն ՀՀ դրամը (երկրորդային շուկայից ձեռքբերելու դեպքում) - Ձեռքբերման արժեքը՝ ոչ ավելի, քան 30 միլիոն ՀՀ դրամ և միևնույն ժամանակ գնահատված շուկայական արժեքը՝ ոչ ավելի, քան 31 միլիոն ՀՀ դրամը (առաջնային շուկայից՝ կառուցապատողից ձեռքբերելու դեպքում) Ձեռքբերվող անշարժ գույքի ձեռքբերման և գնահատված արժեքները համեմատվում են ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայության կողմից հրապարակվող անշարժ գույքի միջին գների հետ (վերջին հրապարակված

	տվյալների հետ)՝հաշվի առնելով բնակարանի մակերեսը և գտնվելու վայրը: Մասնավորապես, բնակարանի մակերեսի և տվյալ տարածքի համար մեկ քառակուսիմետրի միջին արժեքի արտադրյալը չպետք է գերազանցի համապատասխանաբար 26 միլիոն և 31 միլիոն ՀՀ դրամը:
Կանխավճար	1. առնվազն 30% ՀՀ Երևան քաղաքում և մարզերում տրամադրվող վարկերի համար (երկրորդային շուկայից անշարժ գույքի ձեռքբերման դեպքում) * տրամադրված վարկերի համար կանխավճարը կարող է կազմել 10%, եթե՝ - բացի ձեռքբերվող անշարժ գույքից գրավադրվում է նաև այլ բնակելի անշարժ գույք: Ընդ որում, տրամադրվող վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրված բոլոր անշարժ գույքերի արժեքի 70%-ը, բայց ոչ ավել քան 22'500'000 ՀՀ դրամը՝ անկախ գրավադրված բոլոր անշարժ գույքերի արժեքից, կամ - բացի ձեռքբերվող անշարժ գույքի գրավից, վարկ ստանալու դիմումը ներկայացնելու պահին տրամադրվում է նաև երաշխավորություն ՀՀ խոշոր հարկատուների ցուցակում ընդգրկված 1-300 տեղերը զբաղեցնող ձեռնարկությունների (կազմակերպությունների) կողմից, կամ - առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն՝ ձեռքբերվող անշարժ գույքի արժեքի 30 %-ի և վարկառուի կողմից կատարված 10 % (կամ ավել) կանխավճարի տարբերության չափով: 2. առնվազն 20% ՀՀ Երևան քաղաքում և մարզերում տրամադրվող վարկերի համար (առաջնային շուկայից՝ կառուցապատողից անշարժ գույքի ձեռքբերման դեպքում) * տրամադրված վարկերի համար կանխավճարը կարող է կազմել 7,5 %, եթե՝ - բացի ձեռքբերվող անշարժ գույքից գրավադրվում է նաև այլ բնակելի անշարժ գույք: Ընդ որում, տրամադրվող վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրված բոլոր անշարժ գույքերի արժեքի 80%-ը, բայց ոչ ավել քան 27'750'000 ՀՀ դրամը՝ անկախ գրավադրված բոլոր անշարժ գույքերի արժեքից, կամ - բացի ձեռքբերվող անշարժ գույքի գրավից, վարկ ստանալու դիմումը ներկայացնելու պահին տրամադրվում է նաև երաշխավորություն ՀՀ խոշոր հարկատուների ցուցակում ընդգրկված 1-300 տեղերը զբաղեցնող ձեռնարկությունների(կազմակերպությունների) կողմից, կամ - առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն՝ ձեռքբերվող անշարժ գույքի արժեքի 20 %-ի և վարկառուի կողմից կատարված 7,5 % (կամ ավել) կանխավճարի տարբերության չափով:
Վարկի մարման եղանակը	Ամսական անուիտետային մարումներ
Վարկի սպասարկման միանվագ վճար	Վարկի գումարի 0,7%-ը, բայց ոչ պակաս 40'000 ՀՀ դրամից
Վարկի ձևակերպման վայրը	Ընկերության գրասենյակ
Վարկի տրամադրման եղանակը	Կանխիկ կամ անկանխիկ
Վարկի կանխիկ տրամադրման համար վճար	Վարկի գումարի 0,3 %-ը
Վարկի վաղաժամկետ մարում	Տույժեր չեն սահմանվում
Ապահովագրություն	ձեռքբերվող անշարժ գույքի ապահովագրություն՝ վարկի գումարի չափով (0,15%-0,18%)

	վարկառուի և համավարկառուների(առկայության դեպքում) ապահովագրություն դժբախտ պատահարներից՝ վարկի գումարի չափով (0,15%-0,18%) չվճարված կանխավճարի ապահովագրություն(1,8%-2%)
Ժամկետանց պարտավորությունների համար նախատեսված տուժանք	Ուշացման յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ Ժամկետանց գումարի և տոկոսի 0,13 տոկոսի չափով
Այլ պայմաններ	1. Վարկառու կարող են լինել՝ • ՀՀ քաղաքացի կամ ՀՀ քաղաքացիություն չունեցող անձ, ում ամուսինը հանդիսանում է ՀՀ քաղաքացի, և միևնույն ժամանակ նրանց գումարային տարիքը չի գերազանցում 70-ը • 18-35 (ներառյալ) տարեկան ՀՀ քաղաքացի և ռեզիդենտ, առնվազն մեկ երեխա ունեցող և ամուսին չունեցող միայնակ ծնողները 2.Վարկառուի և համավարկառուի(առկայության դեպքում) ընդհանուր ամսական զուտ եկամուտը չպետք է գերազանցի 800'000 ՀՀ դրամը 3. Եթե ամուսիններից որևէ մեկն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակելի անշարժ գույք, ապա այդ հասցեում հաշվառված անձանց 1 շնչի հաշվով բաժնեմասը չպետք է գերազանցի 18 քմ: 4. Վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ պետք է հիմք ընդունել անշարժ գույքի ձեռքբերման և գնահատված արժեքներից նվազագույնը 5. Կանխավճարի ապահովագրությունը կղաղարի գործել այն պահից, երբ վարկ գրավ հարաբերակցությունը կկազմի 70 % երկրորդային շուկայից բնակարանի ձեռքբերման դեպքում և 80 %՝ առաջնային շուկայից(կառուցապատողից) բնակարանի ձեռքբերման դեպքում:
Հնարավոր այլ ծախսեր	• Նոտարական վավերացման հետ կապված ծախսեր(15'000-25'000 ՀՀ դրամ) • Անշարժ գույքի պետական կադաստրի հետ կապված ծախսեր (37'000-85'000 ՀՀ դրամ) • Գույքի գնահատում(15'000-25'000 ՀՀ դրամ՝ կախված գույքի տեսակից)

Այլ դրույթներ՝

- **ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸՁԵՁ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՁ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:
- **ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝**ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ 1-3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

- **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՁ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:
- **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝** ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ և ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ:
- **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿ՝ [այստեղ](#):

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է հանդիսանում պայմանագրի կնքման օրվական նախորդող աշխատանքային օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքը:

Տոկոսադրույքի հաշվարկների իրականացման համար տարին ընդունվում է 365 օր:

- **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** <<ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ>> ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵՁ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է՝ www.fininfo.am:
- Վարկառուի կողմից իր պարտավորությունները չկատարելու դեպքում երաշխավորը պարտավորվում է վճարել Վարկառուի փոխարեն, ինչպես նաև վատանալու է երաշխավորի վարկային պատմությունը և հնարավոր է երաշխավորը գրկվի իր սեփական գույքից:
- Վարկային պայմանագիրը կնքելուց առնվազն 7 օր առաջ Ընկերության կողմից հաճախորդին է տրամադրվում վարկային պայմանագրի կնքելու առաջարկը և վարկային պայմանագրի նախագիծը: Վարկային պայմանագրի առաջարկը ուժի մեջ է 7 աշխատանքային օր՝ հաճախորդին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
- Դուք իրավունք ունեք հաղորդակցվել <Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ> ՓԲԸ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ Էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:
- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է հաճախորդից «Ծանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ (նման պահանջի առկայության դեպքում):
- <Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ> ՓԲԸ կողմից քաղվածքների, փաստաթղթերի կրկնօրինակների և տեղեկանքների տրամադրման սակագներ՝ [այստեղ](#):

Ընկերությունը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից